

Շրջակա միջավայրի վրա
ազդեցության գնահատման
հաշվետվություն

ՀՀ Շիրակի մարզ ք. Գյումրի Երևանյան խճուղի 189 հասցեում նախատեսվող հեղուկ
վառելիքի /գազ/ լիցքավորման կայանի

ՊՍՏՎԻՐՍՈՒՄ՝ Կ. ՀԱԿՈՔՅԱՆ

ԿՍՏԱՐՈՂ՝ Ա/Ձ Ա. ԳԱԼՈՅԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	4
1.1	Ձեռնարկողի մասին տեղեկություն	4
1.2	Հապավումներ.....	4
1.3	Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը.....	5
1.4	Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը.....	5
1.5	Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)	6
1.5.1	<i>Ներկա վիճակ.....</i>	6
1.5.2	<i>Նախատեսվող գործունեության նկարագիր</i>	7
1.5.3	<i>Շանթապաշտպանություն</i>	9
1.5.4	<i>Տեխնոլոգիա.....</i>	9
1.5.5	<i>Իրավիճակային հատակագիծ.....</i>	13
1.5.6	<i>Գլխավոր հատակագիծ</i>	14
1.5.7	<i>Ժամանակացույց.....</i>	15
1.5.8	<i>Շինհրապարակի հատակագիծ</i>	16
1.5.9	<i>Հողային աշխատանքներ. Կադրային ապահովում և շինտեխնիկա</i>	17
1.5.10	<i>Նյութերի և բնառեսուրսների օգտագործում</i>	18
1.5.11	<i>Ինժեներական ցանցեր</i>	19
2.	ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ.....	21
2.1	Աշխարհագրական դիրքը և ռելիեֆը	21
2.2	Երկրաբանություն	21
2.3	Կլիմա.....	22
2.4	Օդային ավազան	23
2.5	Ջրային ռեսուրսներ	27
2.5.1	<i>Ջրային ավազան.....</i>	27
2.5.2	<i>Լճեր, ջրամբարներ և ստորգետնյա ջրեր</i>	27
2.5.3	<i>Ջրերի ֆոնային աղտոտվածությունը</i>	28
2.5.4	<i>Հողեր, էրոզիա և հողի աղտոտում</i>	30
2.5.5	<i>Կենսաբազմազանություն</i>	31
2.5.6	<i>Բնության հատուկ պահպանվող տարածքներ.....</i>	33
2.5.7	<i>Հնագիտական, պատմական, բնական և մշակութային հուշարձաններ.....</i>	33
3	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ	75
3.1	Շինարարական աշխատանքներ	75
3.1.1	<i>Օդի աղտոտում</i>	75
3.1.2	<i>Աղմուկի և թրթռումների ազդեցություն</i>	75
3.1.3	<i>Ջրօգտագործում և ջրահեռացում</i>	76
3.1.4	<i>Ազդեցությունը հողածածկի վրա</i>	76
3.1.5	<i>Ազդեցությունը կենդանական և բուսական աշխարհի վրա</i>	76
3.1.6	<i>Շինաղբ</i>	76
3.1.7	<i>Սոցիալական ազդեցությունը.....</i>	76
3.2	Շահագործման փուլ	76
3.2.1	<i>Օդի աղտոտում</i>	76
3.2.2	<i>Ջրային ռեսուրսներ.....</i>	77

3.2.3 Այլ ազդեցություններ 78

4 ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ՕԴԵՐՆՈՒՅԹԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆԸ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ..... 79

5 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ 79

5.1 Ռիսկերի գնահատում 80

5.2 Արտանետումների աղբյուրները 80

5.3 Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն 80

5.3.1 Մթնոլորտային օդ..... 80

5.3.2 Ջրային ռեսուրսներ..... 81

5.3.3 Հողային ռեսուրսներ 81

5.3.4 Բուսական աշխարհի պահպանության միջոցառումները..... 82

5.3.5 Կենդանական աշխարհի պահպանության միջոցառումներ..... 82

5.3.6 Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը 83

5.3.7 Աղմուկ 84

6. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ..... 85

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ 87

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ..... 89

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 25

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ..... 26

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ..... 27

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն

1.2 Ձեռնարկող՝ Քաղաքացի Կ. Հակոբյան

1.4 Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ ք. Գյումրի Երևանյան խճուղի 189 հասցեում

1.5 Նախատեսվող գործունեության վարչական տարածքը՝ Շիրակի մարզ, ք. Գյումրի

1.7 Աշխատանքային նախագծի մշակող՝ <<Պրոֆէներջի>> ՍՊԸ

1.2 Հապավումներ

ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն

ՓԲԸ՝ Փակ Բաժնետիրական Ընկերություն

ՍՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

ՊՈԱԿ՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն

1.3 Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Ավտոմեքենաների հեղուկ գազի լիցքավորման կայանը նախատեսվում է ՀՀ Շիրակի մարզ ք. Գյումրի Երևանյան խճուղի 189 հասցեում: Ավտոմեքենաների հեղուկ գազի լիցքավորման կայանի կառուցման աշխատանքային նախագիծը իրականացված է ՀՀ-ում գործող նորմատիվ փատաթղթերի պահանջներին համապատասխան:

"Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի /2014թ./ 12-րդ հոդվածի 4-րդ մասի 6-րդ կետի "բ" ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Ավտոմեքենաների հեղուկ գազի լիցքավորման կայանի աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման հաշվետվությունը նկարագրում է նախատեսվող գործողությունները, բնապահպանական ելակետային պայմանները, հնարավոր ազդեցությունները, բնապահպանական ազդեցության գնահատման շրջանակը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

1.4 Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերից, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից և նրանից բխող ենթաօրենսդրական ակտերից, բնապահպանական ոլորտին առնչվող ՀՀ օրենքներից, ինչպես նաև իրավական այլ ակտերից:

«ՀՀ հողային օրենսգիրք» (2001)

«ՀՀ ջրային օրենսգիրք» (2001)

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին»

ՀՀ օրենք (2014)

- «Մթնոլորտային օդի մասին» ՀՀ օրենք
- «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք
- «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք
- «Թափոնների մասին» ՀՀ օրենք (2004)
- «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք
- «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998)
- «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» օրենք
ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N 781
- ՀՀ կառավարության 2010 թվականի N 71-Ն որոշում
- ՀՀ կառավարության 2010 թվականի N 72-Ն որոշում
- ՀՀ կառավարության 14.08.2008 թվականի N 967-Ն որոշում
- ՀՀ կառավարության 08.02.2018 թվականի N 108-Ն որոշում

Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

ՀՀ Քաղաքաշինության նախարարի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգը» (հրաման N44, 28 ապրիլի, 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2013) պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

Բնապահպանական որակի ստանդարտները, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

1.5 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

1.5.1 Ներկա վիճակ

Հեղուկ գազի լիցքավորման կայանը նախատեսվում է կառուցել ՀՀ Շիրակի մարզ ք. Գյումրի Երևանյան խճուղի 189 հասցեում:

Հողամասի բնութագրեր՝

Հողամասի մակերեսը կազմում է 0.15 հա

Կադաստրային ծածկագիր՝ 08-001-1184-0041:

Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի
 Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական
 կառուցապատման

Գրանցված իրավունքի տեսակը՝ Սեփականություն

Հողատարածքը ազատ է կառուցապատումից, ծառաթփային բուսականությունը
 բացակայում է:

Տարածքում բնության հատուկ պահպանվող տարածքներ կամ
 պատմամշակութային հուշարձաններ առկա չեն:

1.5.2 Նախատեսվող գործունեության նկարագիր

ՀՀ Շիրակի մարզ ք. Գյումրի Երևանյան խճուղի 189 հասցեում նախատեսվող
 ավտոմեքենաների հեղուկ գազի լիցքավորման կայանի նախագիծը մշակվել է
 «Պրոֆէնէրջի» ՍՊԸ-ի կողմից, համաձայն նախագծային առաջադրանքի:

Տարածքում կառուցապատում իրականացնելու համար հիմք է հանդիսանում
 տարածքի սեփականատեր Կ. Հակոբյանի սեփականության իրավունքը հաստատող N
 15102019-08-0026 անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման
 վկայականը և Գյումրի համայնքի կողմից 03.05.2023թ. տրամադրված N91
 ճարտարապետահատակագծային առաջադրանքը:

ՀՀ Շիրակի մարզ Գյումրի համայնք Երևանյան խճուղի 189 հասցեում նախատեսվող
 հեղուկ գազի լիցքավորման կայանը մեկուսացված է բնակելի զանգվածից շինարարական
 նորմերի պահանջներին համապատասխան:

Հարթակը գտնվում է երկրորդ սեյսմիկ գոտում: Ավտոմեքենաների հեղուկ գազի
 լիցքավորման կայանը բաղկացած է օպերատորային շինությունից, մղող պոմպի
 համակարգից, ստորգետնյա 1 գազամբարից ($V = 20.0 \text{ Մ}^3$), 1 ստորգետնյա գազամբարից
 վթարային (20.0 Մ^3), ավտոմեքենաների գազալցակետից (երկու աշտարակ երկու
 ճկափողով), շանթարգելներից, հակահրդեհային վահանակներից: Միջբլոկային –
 միջկոնտեյներային հաղորդակցուղիները մտնում են գործարանային սարքվածքների
 կազմի մեջ և տեղադրվում են համաձայն սարքվածքների հետ ստացվող նախագծերի:

Օպերատորային շինությունը իրենից ներկայացնում է 8.4x5.4մ չափսերով մեկ
 հարկանի շինություն, որը իր մեջ ներառում է օպերատորային սենյակ, տնօրենի սենյակ,
 հանգստի սենյակ, պահեստ և սանհանգույցներ:

Տարածքում նախատեսվում է 3x5մ չափսերով բետոնապատ շերտով հարթակ
 լիցքավորման մեքենայի համար:

Հեղուկ գազի լիցքավորման կայանի աշխատանքային նախագիծը մշակված է
 ճարտարապետաշինարարական գծագրերի, ՀՀՇՆ IV-12.03.01-04, (գազաբաշխիչ
 համակարգեր) ՇՆՁ IV-12.101-04, Գազաբաշխիչ համակարգերի նախագծում և
 շինարարություն շինարարական նորմերի, ինչպես նաև Կառավարության 2022 թվականի

հուլիսի 21-ի № 1131-Ն որոշմամբ հաստատված կարգով /ավտոգազալցակայանների կառուցման և շահագործման տեխնիկական անվտանգության կանոնները սահմանելու մասին/:

Գազամբարի տեղադրում ստորգետնյա - 20.0մ³ ծավալով:

Գազամբարի տեղադրում ստորգետնյա / վթարային / - 20.0մ³ ծավալով:

Հեղուկ գազի լցասյունակ - երկու ճկախողովակով

Պողպատե վերգետնյա գազատարի մեկուսացումը մետաղական կոնցրետեկցիաներից կիրականացվի պոլիէթիլենից ԳՈՍՍ 16338-85 E: Փորձարկումը կկատարվի յուղաներկումից առաջ:

Հողային աշխատանքները կիրականացվեն այն բոլոր կազմակերպությունների ներկայացուցիչների ներկայությամբ, որոնց իրավասության տակ են գտնվում ստորգետնյա կոմունիկացիաները : Խրամուղու հետլիցքը պետք է կատարվի հետեվյալ հերթականությամբ սկզբում պատրաստվում է ավազե հիմք 0.1 մ հաստությամբ, որից հետո 10 - 15 սմ շերտով ձեռքով կատարվում է հավելում, մինչ- 0.2 մ խողովակի մակերեսից վերտոփանումով: Հետագա լիցքը կատարվում է մեխանիզմով:

Գազատարի ամբողջ երկայնքով անց է կացվում ազդանշանային ժապավեն / դեղին գույնի / ոչ պակաս 0.2 մ լայնությամբ, գազատարի վերնի նիշից 0.2 մ բարձրությամբ: Այն հատվածներում, որտեղ գազատարը հատվում է մյուս՝ կոմունիկացիաների հետ զգուշացնող ազդանշանային ժապավենը տեղադրել կրկնակի, իրարից 0.2 մ հեռավորության վրա հատման մասից 2 մ հեռավորության վրա յուրաքանչյուր կողմից:

Մոնտաժումը, փորձարկումը – աշխատանքների ընդունումը կատարվում է պահպանելով ՀՀՇՆ IV-12.03.01-04 - ի պահանջները:

Հողամասի ընդհանուր չափսը - 0,15 հա

Կառուցապատման մակերես - 164.0 մ²

Կանաչապատման մակերես – 908մ²

Բարեկարգում – 428 մ²

Նախագիծը կատարված է ՀՀ-ում գործող ՀՀՇՆ IV-12.03.01-04, (գազաբաշխիչ համակարգեր) ՇՆՁ IV-12.101-04, Գազաբաշխիչ համակարգերի նախագծում և շինարարություն, շինարարական նորմերի, ինչպես նաև ՀՀ կառավարության 28.08.2008 թ. (Ավտոգազալիցքավորման ճնշակայանների (ԱԳԼՃԿ) կառուցման և շահագործման նվազագույն պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1101 -Ն և ՀՀ կառավարության 22.12.2005 թ. Անվտանգության կանոնները գազի տնտեսությունում Տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին N 2399 -Ն որոշումների հիման վրա:

Հեղուկ վառելիքի լիցքավորման կայանի կառուցման և շահագործման ընթացքում կպահպանվեն ՀՀ առողջապահության նախարարի 2010 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 21-Ն հրամանի պահանջները:

1.5.3 Շանթապաշտպանություն

Հեղուկ գազի լիցքավորման կայանի շանթապաշտպանությունը նախատեսվում է իրականացնել մեկ շանթարգելով: Հաշվարկները կատարված են համաձայն PД 34.21.122-87 «Շենքերի և կառույցների կայծակապաշտպանության սարքավորումներ» հրահանգի, ՀՀ տարածքում գործող այլ նորմերի ու կանոնների:

Ընդունված է 25 մ բարձրությամբ շանթարգել, կառուցված տարբեր տրամաչափի մետաղական խողովակներից:

Նախատեսվում է կառուցել հողանցման օջախ: Որպես հորիզոնական հողանցիչ նախատեսվում է 40 x 4 տիպի շերտապողպատ, իսկ ուղղահայաց հողանցիչ 2.5 մ երկարությամբ 50x50x5 մմ չափի անկյունակ, որոնց թիվը կարող է փոփոխվել կախված հողանցման կոնտուրի չափումների արդյունքներից: Անհրաժեշտության դեպքում հարկավոր է ավելացնել ուղղահայաց հողանցիչների թիվը ապահովելով հողանցման նորմատիվային թույլատրելի դիմադրությունը:

Հողանցման օջախին 40 x 4 տիպի շերտապողպատով միանում են տարածքում առկա, լարման տակ չգտնվող բոլոր մետաղական ստրուկցիաները:

1.5.4 Տեխնոլոգիա

ԳԼ կայանների տարածքը անհրաժեշտ է ցանկապատել: Ցանկապատը պետք է պատրաստված լինի չիրկիզվող նյութերից և ապահովի տարածքի օդափոխությունը: ԳԼ կայանների ներհրապարակային ճանապարհների տրանսպորտային շինությունները /անցատեղերը, անցուղիները և այլն/ պետք է պատրաստվեն չիրկիզվող նյութերից: ԱԳԼԿ կայանների տարածքները պետք է ունենան պահպանական/պահակային լուսավորում: ԳԼ կայանների տարածքը պետք է լինի մաքուր: Անցուղիները և անցումները պետք է լինեն ազատ: Կայանների տարածքում արգելվում է ԳԼ կայանների արտադրական գործընթացներին ոչ պիտանի նյութերի պահեստավորումը և պահպանումը: Ստորգետնյա ռեզերվուարներ են համարվում այն ռեզերվուարները, որոնց վերին եզրը գտնվում է հարակից տարածքի նախագծային նշագծից առնվազն 0,2 մ ցածր: Ստորգետնյա ռեզերվուարներին են հավասարվում այն արտաքին ռեզերվուարները, որոնք լցածածկվում են գրունտով վերին եզրից հաշված առնվազն 0,2 մ բարձրության վրա, իսկ լայնքով՝ ռեզերվուարի պատից հաշվելով 6 մ հեռավորության վրա: Արտաքին ռեզերվուարների միջև հեռավորությունը պետք է լինի մոտակա ամենամեծ ռեզերվուարի տրամագծից ոչ պակաս, իսկ եթե դրանց տրամագիծը 2 մ-ից պակաս է, ապա առնվազն 2 մ:

Ստորգետնյա ռեզերվուարների միջև հեռավորությունը պետք է լինի մոտակա ամենամեծ ռեզերվուարի տրամագծի կեսից ոչ պակաս, բայց առնվազն 1 մ: Ստորգետնյա ռեզերվուարների անջատող սարքավորումները, ապահովիչ կափույրները և հսկիչ-չափիչ սարքերը պետք է գտնվեն գետնի /լցածածկի/ մակերեսից բարձր: Ստորգետնյա և վերգետնյա հեղուկ գազերի ռեզերվուարները պետք է սարքավորվեն հեղուկի մակարդակի ցուցիչներով, մանոմետրերով և ապահովիչ կափույրներով: Բացի այդ, վերգետնյա ռեզերվուարները պետք է սարքավորվեն նաև չսառչող ճնշակարգավորիչ

կափույրով:Ռեզերվուարի վրա պետք է տեղադրվեն առնվազն երկու ճնշաթափման ապահովիչ կափույրներ: Դրանցից առաջ պետք է տեղադրված լինի հատուկ եռաքայլ ծորակ, որը թույլ կտա անջատել երկու կափույրներից որևէ մեկը:Գազի հեռացումը ապահովիչ կափույրներից պետք է իրականացվի մոմերի միջոցով: Ապահովիչ կափույրների փչամաքրման մոմերի վրա անջատող սարքերի տեղադրումը արգելվում է: Թույլատրվում է մի քանի ապահովիչ կափույրների միացումը մեկ փչամաքրման մոմին: Փչամաքրման մոմերի բարձրությունը ռեզերվուարի համեմատ պետք է լինի 3 մ-ից ոչ պակաս` վերգետնյա ռեզերվուարների համար այդ հեռավորությունը հաշվառվում է սպասարկման հրապարակի մակերեսից, իսկ ստորգետնյա ռեզերվուարների համար` լցածածկի մակարդակից: Շենքից դուրս տեղադրված փչամաքրման մոմերի բարձրությունը գազատարների և սարքավորումների համեմատ պետք է լինի 3 մ-ից ոչ պակաս` հաշվելով միացման տեղից: Բաց տիպի մակարդակաչափային ապակիներով հեղուկի մակարդակի ցուցիչները պետք է հաշվարկված լինեն առնվազն 1,8 ՄՊա ճնշման համար, ունենան արագագործ կափույրներ, անջատող ծորակներ և պաշտպանված լինեն վնասվելուց: Ջեռուցող սարքավորումներ թույլատրվում է տեղադրել ինչպես ռեզերվուարների ներսում, այնպես էլ դրսից, այն պայմանով, որ դա չառաջացնի ռեզերվուարի ներքին ճնշման հաշվարկային ցուցանիշներից բարձր աճ:Չրնի ճառագայթումից վերգետնյա ռեզերվուարների տաքացումը բացառելու համար դրանք ներկվում են բաց գույնի ներկով /անհրաժեշտության դեպքում, բայց ոչ պակաս 5 տարին մեկ անգամ/ կամ սարքավորվում են ջերմային պատյանով, կամ տեղադրվում են չիրկիզվող նյութերից պատրաստած ծածկարանների տակ: Ստորգետնյա ռեզերվուարները պետք է պաշտպանված լինեն կոռոզիայից` համաձայն սահմանված նորմերի պահանջների:Չրգելվում է ԳԼ կայանների տարածքով օդային էլեկտրահաղորդակցման գծերի անցկացումը: Պահպանման բազայի տարածքի սահմաններում մալուխային գծեր թույլատրվում է անցկացնել միայն դեպի հսկիչ-չափիչ սարքերը և ավտոմատ սարքավորումները, որոնք անհրաժեշտ են ռեզերվուարի շահագործման համար: Պահպանման բազայի տարածքում տեղադրված բոլոր հսկիչ-չափիչ սարքերը և ավտոմատ սարքավորումները պետք է լինեն պայթապաշտպանված կատարմամբ: Տեղադրվող սարքավորումները և սարքերը պետք է համապատասխանեն տարածքների պայթահրդեհավտան գավորության պահանջներին, ինչը սահմանվում է ստանդարտներով: ԳԼ կայանների գազատարերով հեղուկ գազերի հեղուկ և գազանման ֆազերի տեղափոխման համար կիրառվող ճնշիչները և պոմպերը պետք է լինեն հատուկ կատարմամբ և պիտանի պրոպան-բութանային չափամասերի վերամղման համար:Մեկ շարքով երկու և ավելի պոմպերի կամ ճնշիչների տեղադրման դեպքում անհրաժեշտ է նախատեսել սպասարկման ճակատով հիմնական անցումի առնվազն 1,5 մ լայնք, պոմպերի միջև նվազագույնը 0,8 մ հեռավորություն, ճնշիչների միջև` 1,5 մ, ճնշիչների և պոմպերի միջև` 1,0 մ, և պոմպերից ու ճնշիչներից մինչև սենքի պատերը` առնվազն 1,0 մ հեռավորություն: Պոմպերի և ճնշիչների ներծծող և արտամղող խողովակառոտերի վրա պետք է տեղադրվեն անջատող սարքեր, իսկ արտամղող խողովակառոտերի վրա` նաև հակադարձ կափույրներ:


Պոմպերից առաջ պետք է տեղադրված լինեն փչամաքրման մոմերով գոտիչներ/ֆիլտրեր, պոմպերից հետո արտամղիչ գազատարների վրա՝ փչամաքրման մոմեր, որոնք կարող են միացվել գոտիչների/ֆիլտրերի մոմերի հետ: Մխոցավոր և մրրիկային պոմպերի կուտակիչները պետք է սարքավորված լինեն դիֆերենցիալ կափույրներով, որոնք միացվում են ռեգերվուարների խողովակաշարի հետ տարաթողման գծով:

Ներծծող գծերի վրա ճնշիչներից առաջ տեղադրվում են փչամաքրման սարքավորումներով հեղուկի գատիչներ, իսկ արտամղող գծերի վրա՝ յուղագատիչներ: Ճնշիչները և պոմպերը պետք է սարքավորված լինեն դրանց նորմալ աշխատանքը ապահովող չափանիշների խախտման դեպքում և, անհրաժեշտության դեպքում, նաև գատիչներում հեղուկի մակարդակի բարձրացման դեպքում էլեկտրաշարժիչները անջատող ավտոմատ համակարգով: Սեպափոկային փոխանցումներում պետք է օգտագործվեն ԳՕՍՍ 1284.2-89-ի պահանջներին համապատասխանող սեպաձև փոկերը: Պոմպրետորի սարքավորումների բոլոր այն մետաղյա մասերը, որոնք աշխատանքի ժամանակ կարող են հայտնվել լարման տակ /հենցը, էլեկտրաշարժիչների կորպուսները/հենամարմինները, պահարանները, կառավարման վահանակները և այլն/ պետք է լինեն հողակցված: Բոլոր փոկային փոխանցումների մեկուսացումը պետք է տեղադրել փոկերից առնվազն 20 սմ հեռավորության վրա: Լցավորման բաժանմունքի դասավորումը/կազմավորումը պետք է բացառի բալունների լիցքավորման կայանին ավտոմոբիլային տրանսպորտի 5 մ-ից ավելի մոտենալու հնարավորությունը: ԳԼ կայանների բոլոր փակ պայթավտանգավոր սենքերը պետք է սարքավորված լինեն մեխանիկական ներծծիչ-արտածծիչ օդափոխման համակարգով, որը կապահովի աշխատանքի ժամանակ 1 ժամվա ընթացքում առնվազն տասնապատիկ օդափոխանակումը, իսկ ոչ աշխատանքային ժամերին 1 ժամվա ընթացքում՝ եռապատիկ օդափոխանակում: Ոչ աշխատանքային ժամերին իրականացվող օդափոխումը կարող է լինել մեխանիկական, բնական կամ խառը: Ճնշիչ պոմպակայանը բացի ներծծիչ-արտածծիչ օդափոխման համակարգի պետք է ունենա նաև վթարային օդափոխման համակարգ: Արտածծիչ համակարգերի օդամղիչները պետք է այնպես համակցված լինեն պայթավտանգավոր սենքերում տեղադրված ճնշիչների և պոմպերի էլեկտրահաղորդակների հետ, որ բացառվի դրանց աշխատանքի հնարավորությունը օդափոխման համակարգի անջատման դեպքում: Հեղուկ գազերի գազատարերը պետք է ներկվեն պայմանական գույների յուղաներկով. գազանման ֆազի գազատարերը՝ դեղին գույնի լայնական կարմիր օղակներով, հեղուկ ֆազի գազատարերը՝ շագանակագույն, լայնական կարմիր օղակներով: Հեղուկ ֆազի վերգետնյա արտաքին գազատարերը պետք է ներկվեն արևի ճառագայթները անդրադարձնող բաց գույնի ներկերով առանձին հատվածների ազդանշանային ներկվածքով՝ ԳՕՍՍ 14202-69 ստանդարտով սահմանված պահանջներին համապատասխան:


Դատարկման-լիցքավորման սարքավորումների համար պետք է կիրառվեն 1,6 ՄՊա-ից ոչ պակաս աշխատանքային ճնշման համար նախատեսված Բ «ընդհանուր» տեսի նազործվածքային խողովակները կամ այլ խողովակները, որոնց տեխնիկական

հատկությունները պակաս չեն Բ «ըն դասի խողովակների հատկություններից /ԳՕՍՍ 18698-79/: Ռետինագործվածքային խողովակները արգելվում է օգտագործել որպես մնայուն գազատարեր: Ռետինագործվածքային խողովակի եզրերը պետք է ունենան հատուկ սարքավորումներ գազատարերի և այլ անոթների խողովակապտուկներին միանալու համար: Ռետինագործվածքային խողովակները պետք է լինեն շրջահյուսված 2 մմ և ավելի տրամագծով պղնձե լարերով կամ 4 մմ-ից ոչ պակաս կտրվածքով պղնձե ճուպանով՝ 100 մմ-ից ոչ պակաս պտույտի քայլով: Մետաղալարի երկու եզրերը միացվում են խողովակի եզրամասի հետ զողումով կամ հեղույսի տակ Պահեստային շինությունում օդի ջերմաստիճանը չպետք է լինի 5°C ցածր և 30°C բարձր, օդի հարաբերական խոնավությունը՝ 80% ոչ ավելի, օրվա ընթացքում ջերմաստիճանը 10°C-ից չպետք է տատանվի:

1.5.5 Իրավիճակային հաստակագիծ



1.5.6 Գլխավոր հատակագիծ



Prof. group energy

ՆԱԽԱԳՈՐԴ՝
 "ՊՐՈՖԵՆԵՐԳԻ" ՍՊԸ
 Հասցե: Երևան, Տեղյակ 91
 հեռ: (012) 771717
 e-mail: info@profenergy.am
 web: http://profenergy.am/

ՊԵՏԱԿԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ No
 000-0-050
 00017022

ՊՍԿՎՐԱՏՈՐ՝
 ԿԱՐԵՆ ԴԱԿՈՐՅԱՆ

ՆԱԽԱԳԾԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝
 ԴԵՂՈՒԿ ԿԱՌԵԼԻՔԻ
 ԼԻՑԲԱՎՈՐՄԱՆ
 ԿԱՅԱՆԻ ԿԱՌՈՒՅՈՒՄ

ՀԱՍՏԵ՝
 ԴԴ ՍԱՐԶ ԵՐՈՎԱԿԻ
 ԴԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՄԻ
 ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՐԻ
 189 ԳՈՐԱՄԱՍ

ԳՍՏԱԳԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ
 Գլխավոր հատակագիծ
 Մ 1:500

ՆԱԽԱԳՑՄԵՆԻ ՓՈՒԼ
 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
 ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽ. ՀԱՄԱՐԸ
 N 27-23

ՆԱԽԱԳՑԻ ԴԵԿՎԱՄ	Ս. ԴԱԿՈՐՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԳՐԱՏՆԱԳՐԵՑ	Լ. ՈՒՄԵՂՅԱՆ
ԳՐԱՏՆԱԳՐԵՑ	Վ. ԹՈՒՄԱՆՅԱՆ
ԳՐԱՏՆԱԳՐԵՑ	
ՍՏՈՐԳԵՑ	Լ. ՈՒՄԵՂՅԱՆ
ՍԼՈՒՄ	ԹԵՐԹ ԹԵՐԹԵՐ
	1 7 17

ԾԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՍ

1.5.7 Ժամանակացույց

	ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ ԸՍՏ ԱՄԻՄՆԵՐԻ											
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	Յողային աշխատանքներ	■	■	■									
2	Ե/բ կոնստրուկցիաներ			■	■	■							
3	Մետաղական կոնստրուկցիաներ					■	■						
4	Պատերի իրականացում						■	■					
5	Գազալցակայանի պարագաներ, հորեր								■				
6	Տանիքի իրականացում									■	■		
7	Արտաքին հարդարման աշխատանքներ										■	■	
8	Ներքին հարդարման աշխատանքներ											■	■
9	Տարածքի բարեկարգում												■

Ընդհանուր աշխատանքների տևողությունը 12 ամիս

1.5.9 Հողային աշխատանքներ. Կադրային ապահովում և շինտեխնիկա

Ավտոմեքենաների հեղուկ գազի լիցքավորման կայանի նախագիծը նախատեսված է ՀՀ Շիրակի մարզ ք. Գյումրի Երևանյան խճուղի 189 հասցեում:

Հողային աշխատանքների ծավալ՝ հանույթ, 1200 հետլիցք՝ 300 խմ: Ավելցուկ 900 խմ հողային զանգվածը կպահպանվի շինհրապարակում, այնուհետև կտեղափոխվի Գյումրի համայնքի հետ համաձայնեցված վայր:

ԻՏԱ և բանվոր անձնակազմ, մարդ շինարարության փուլ՝

- Ինժեներատեխնիկական անձնակազմ - 2 մարդ
- Արհեստագործներ և բանվորներ - 10 մարդ
- Մեքենավարներ և օգնականներ - 5 մարդ

Հիմնական շինարարական տեխնիկայի պահանջարկը որոշվում է աշխատանքների ծավալների, մեխանիզմների և մեքենաների միջին արտադրողականության և աշխատանքների կատարման ընտրված եղանակների հիման վրա: Հիմնական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը բերված է ստորև՝

Շինարարական մեքենաների և մեխանիզմների անվանացանկ՝

ԴԻՐՔ	ԱՆՎԱՆՈՒՄ	ՔԱՆԱԿ
1	Թրթուրավոր կռուճ	1 հատ
2	ճնշակ (կոնպրեսոր)	1 հատ
3	Գազատեղակցող ագրեգատ	1 հատ
4	Հարվածող մուրճ	1 հատ
5	Էլեկտրամուրճ	1 հատ
6	Բեռնատար ավտոմեքենա	1 հատ
7	Ինքնաթափ ավտոմեքենա	1 հատ
8	Էքսկավատոր	1 հատ
9	Ավտոբետոնախառնիչ	1 հատ
10	Ավտոբետոնապոմպ	1 հատ
11	Թրթռիչ՝ մակերևութային	1 հատ

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը իրականացվելու է շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում:

1.5.10 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում

Շինարարության ժամանակ օգտագործվելու են շինանյութեր, որոնց ցանկը և քանակները ներկայացված են աշխատանքային նախագծի համապատասխան բաժնում: Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար՝ և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքերի ընթացքում, շինարարական աղբն է՝ 120 կգ: Շինարարական աղբը ամբողջությամբ կտեղափոխվի համայնքի հետ պայմանագրային հիմունքներով հատկացված վայր:

ա) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{\Sigma.i} = (n \times N + n_1 \times N_1) \times T, \text{ որտեղ}$$

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 2 մարդ

N – ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ $0.016 \text{ մ}^3\text{օր/մարդ}$

n_1 – սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 15 մարդ

N_1 – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ $0.025 \text{ մ}^3\text{օր/մարդ}$

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 360 օր

$$W_{\Sigma.տ.} = (2 \times 0.016 + 15 \times 0.025) \times 360 = 146.52 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 0.407 \text{ մ}^3/\text{օր:}$$

բ) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$$U_1 = S_1 \times K_1 \times T \times D, \text{ որտեղ՝}$$

S_1 – ջրվող տարածքի մակերեսը, 300 մ^2 ,

K_1 – 1 մ^2 ջրցանի նորմը, 0.0015 մ^3 ,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 240

D – ջրցանի օրեկան քանակը, 2 անգամ

$$U_1 = 300 \times 0.0015 \times 240 \times 2 = 216 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 0.9 \text{ մ}^3/\text{օր}$$

Ընդամենը ջրօգտագործումը կկազմի $362.52 \text{ մ}^3/\text{շին. ժամ:}$

Բանվորական և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար շինհրապարակում կտեղադրվեն ժամանակավոր բիոզուգարաններ, որոնք շինաշխատանքների ավարտից հետո կապամոնտաժվեն:

Շինհրապարակում սանիտարական կանոնները և նորմերը պահպանվելուն են համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N15-Ն հրամանի համաձայն:

Բանվորկան և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու և տարածքի ջրցանի համար ջրամատակարարումը կիրականացվի ավտոցիստերնով, պայամանագրային հիմունքներով:

Խմելու որակի ջուրը շինհրապարակ կմատակարարվի ջրի տարաներով, խմելու ջուր վաճառող ընկերությունից, պայամանագրային հիմունքներով:

1.5.11 Ինժեներական ցանցեր

Լցակայանի ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի միանալով <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ ցանցին, որի համար սահմանված կարգով ստացվել է տեխնիկական պայման /կցված Հավելվածներ բաժնում/: Ջրամատակարարումը նախատեսվում է տարածքում անցնող D=1500մմ տրամագծի ջրատարից: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բիոզուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով:

Շահագործման փուլում կայանում առաջացող կենցաղային կեղտաջրերը սանիտարական-սարքերից ինքնահոս հավաքվում և հեռացվում է ներքին ցանցի միջոցով դեպի կոյուղու բակային ցանց: Բակային ցանցի միջոցով ուղղվում են կեղտաջրերի անջրթափանց հոր: Հորի ծավալը կազմում է 45 խմ: Կապված լցվելու հաճախականությունից սեփտիկ հորից կենցաղային կեղտաջրերը հատուկ մեքենաներով կհեռացվեն կոյուղու ցանց:

Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում էլեկտրամատակարարումը կիրականացվի համաձայն «ՀԷՑ» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրի /կցված Հավելվածներ բաժնում/:

1.5.12 Կանաչապատման և բարեկարգման աշխատանքներ

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է կանաչապատել և բարեկարգել տարածքը: Կանաչապատվող տարածքի մակերեսը կազմում է 1050մ², նախատեսվում է սիզախոտ և թփեր: Տարածքի ոռոգման համար նախատեսվում է կազմակերպել ցնցողային ոռոգման ցանց: Կանաչապատ տարածքների ոռոգումն համար կառուցապատող ընկերությունը կդիմի լիզորված մարմնին համապատասխան տեխնիկական պայմաններ ստանալու համար:

Կանաչապատման աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ 300մ³ հողաբուսաշերտի ձեռքբերումը կհամաձայնցվի տեղական ինքնակառավարման մարմինների հետ:

Կանաչապատ տարածքի 1 մ²-ի մեկ ռոռզման համար ջրի ծախսի նորման կազմում է 4-6 լ/ մ²:

Տեղանքի շոգ կլիմայական պայմանների համար ընդունում ենք առավելագույն արժեքները.

գազոնների ռոռզում՝ $n_6 = 0.006 \text{ մ}^3/\text{մ}^2$

Ռոռզման համար ջրապահանջը որոշվում է՝

$$W_{u.3} = (n_6 \times S) \times K \times t$$

որտեղ՝ S – ռոռզվող տարածքի մակերեսն է, գազոնների մակերեսը՝ $S_1 = 908 \text{ մ}^2$,

K – ռոռզման օրական հաճախականությունն է, $K = 2$

t - ռոռզման օրերի պլանավորված թվաքանակն է, $t = 175 \text{ օր}$

$$W_{u.3} = (0.006 \times 908) \times 2 \times 175 = \underline{\underline{1906.8}} \text{ մ}^3/\text{տարի}$$

2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

2.1 Աշխարհագրական դիրքը և ռելիեֆը

Նախատեսվող գործունեության տարածքը վարչականորեն գտնվում է Շիրակի մարզում: Տեղամասի ռելիեֆը սարահարթային է: Բացարձակ բարձրությունների նիշերը տատանվում են 1500-1700 սահմաններում: Ռելիեֆի ծագումնային տիպը կուտակումային է՝ ներկայացված լճալյուվիալ նստվածքներով և մասամբ հրաբխային է՝ ներկայացված ծալքավոր կառուցվածքների թույլ մակերեսին տարածված ճեղքային արտավիժման լավային ծածկույթներով: Տեղամասի բուսականությունը տափաստանային է՝ ներկայացված կծմախոտային տափաստաններով, ինչպես նաև կուլտուրականացված ծառատեսակներով և թփերով:

2.2 Երկրաբանություն

Հողերը լեռնատափաստանային են՝ ներկայացված չափավոր խոնավ տափաստանների լեռնային կարբոնատային և տիպիկ սևահողերով: Տեղամասը մտնում է Ախուրյան-Հրազդանի լանդշաֆտաջրաբանական շրջանի մեջ: Միջին հոսքը 1 քառ. կմ տերիտորիայից 2,5 լ/վրկ է: Տեղամասի հարթավայրային մասում սելավներ չեն լինում, նախալեռնային հատվածում՝ միջին ակտիվության սելավներ (սելավները կրկնվում են 3-10 տարին մեկ անգամ): Տեղամասում տարածված են չորրորդական լճագետային նստվածքների չստորաբաժանված կոմպլեքսի ջրեր: Գրունտային ջրերի ամենավերին հորիզոնն ըստ գրականության և նախկինում հորատված հորատանցքերի՝ գտնվում է 3.0-3.5 մ խորության վրա, որի մակարդակը ենթակա է փոփոխության՝ ելնելով տարվա ընթացքում մթնոլորտային տեղումների և մակերևութային ջրերի հաշվեկշռի տատանումներից: Բոլոր տիպի ջրերը չունեն ագրեսիվություն բետոնի նկատմամբ: Ըստ ակնադիտական, բնական մերկացումների և հորատման տվյալների՝ տեղամասում ժամանակակից ֆիզիկա-երկրաբանական պրոցեսները, որոնք կարող են վնասակար ազդեցություն ունենալ ա/ճ-ի վերանորոգման և շահագործման համար, այն է՝ սողանքներ, փլվածքներ, քարացրոններ, ձորակառաջացման պրոցեսներ կամ բացակայում են, կամ շատ թույլ են արտահայտված, մասնավորապես առկա են ֆիզիկական հողմահարման:

2.3 Կլիմա

Ուսումնասիրվող տարածքը գտնվում է 1556-II կլիմայական գոտում, որտեղ հուլիսին օդի միջին ջերմաստիճանը 19.5°C աստիճան է: Առավելագույն ջերմաստիճանը հասնում է 38°C: Ամենացուրտ ամսվա միջին ջերմաստիճանը -9.0°C է: Նվազագույն ջերմաստիճանը հասնում է -36°C-ի: Կայուն ձնածածկույթը պահպանվում է միջինը 1-ից 3 ամիս: Առանց սառնամանիքի օրերի թիվը տատանվում է միջինը 200-ից 240 օրերի միջակայքում: Ձնաբքոտ օրերի թիվը 5-10 օր է: Տարեկան տեղումների քանակը կազմում է 498 մմ: Տարեկան գոլորշունակությունը 900-1100 մմ է և օդի միջին հարաբերական խոնավությունը տատանվում է 40%-ից (ամռանը) 75% (ձմռանը): Քամիների ուղղությունները հիմնականում հյուսիսային և հյուսիս-արևմտյան են: Լեռնային երկրներին հատուկ օրինաչափությամբ՝ ՀՀ-ում կլիմայական գոտիները փոխվում են ըստ բարձրության: Ներկայացվող տարածքի կլիմայական պայմանների նկարագրության համար օգտվել ենք ՀՀ քաղաքաշինության նախարարի 2024թ. հունվարի 15-ի N03-Ն հրամանով հաստատված «Շինարարական կլիմայաբանություն» ՀՀՇՆ 22.01.2024 փաստաթղթից:

Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը Գյումրի օդերևութաբանական կայանի տվյալներով

Օդերևութաբանական կայան	Օդերևութաբանական կայանի բարձրությունը, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, C°												Միջին տարեկան C°	Բացարձակ նվազագույն C°	Բացարձակ առավելագույն C°
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Գյումրի	1528	-9,0	-7,2	-1,2	6,7	11,7	15,5	19,5	19,5	15,2	8,5	1,7	-5,1	6,3	-36	38

Օդի հարաբերական խոնավությունը Գյումրի օդերևութաբանական կայանի տվյալներով

Օդերևութաբանական կայան	Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %												Միջին տարեկան	Միջին ամսական մ. 15-ին	
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12		հունվարին	օգոստոսին
Գյումրի	83	82	76	68	69	66	62	60	63	70	75	84	72	71	39

Մթնոլորտային տեղումները Գյումրի օդերևութաբանական կայանի տվյալներով

Քանակավորի անվանումը	Տեղումներ												Տարեկան	Չնստած կայք		
	Քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ													Առավելագույն տասնօրյակային բարձրագույնը, մմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Չյան մեջ օրի Առավելագույն քանակը, մմ
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12				
Գյումրի	23/16	25/26	32/24	61/30	85/53	70/42	49/88	36/41	28/36	41/30	29/25	35/32	507/88	61	94	129

Ցույն


Բնակավայր, օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան սրճեղբորտաբանական ծածուկ (մ/վա)	Կրկնելիությունը, % ուղղությունների								Սննդամթերքային	Միջին ամսական	Միջին տարեկան		
		Միջին արագություն, մ/վ												
		Հյուսիս (Հս)	Հյուսիս-Արևելյան (ՀսԱրև)	Արև հյուսիս (Արև)	Հարավ-Արևելյան (ՀվԱրև)	Հարավ (Հվ)	Հարավ-Արևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիս-Արևմտյան (ՀսԱրմ)					
Գյումրի	846,9	հունվար		15	18	8	3	13	19	10	14	85	0,6	2,0
				0,7	0,6	0,5	0,6	0,8	0,5	0,5	0,5			
		ապրիլ		14	17	11	4	12	19	12	11	61	1,7	
				1,8	1,4	1,9	1,6	1,7	1,7	1,5	1,5			
		հուլիս		19	39	24	2	2	4	5	5	56	2,1	
				1,9	1,9	2,2	1,6	1,4	1,4	1,2	1,6			
		հոկտեմբեր		18	20	9	2	12	17	13	9	79	0,8	
				0,8	0,7	0,7	0,6	0,8	0,6	0,6	0,7			

2.4 Օդային ավազան


Հայաստանի հանրապետության տարածքում օդային ավազանի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի» ՊՈԱԿ կողմից: Հայաստանի Հանրապետության Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ կողմից օդերևութաբանական դիտարկումներ կատարվում են հանրապետության տարածքի 47 (այդ թվում՝ 6 դժվարամատչելի և 3 մասնագիտացված) օդերևութաբանական կայանում: Դիտարկումներն իրականացվում են Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպության կողմից սահմանված կարգով և միջազգային ստանդարտներին համապատասխան՝ 3 ժամը մեկ անգամ՝ սկսած ժամը 00:00-ից (Գրինվիչի ժամանակով), մթնոլորտային երևույթների և եղանակի վիճակի վերաբերյալ իրականացվում են շուրջօրյա դիտարկումներ: Ներկայումս մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումներն իրականացվում են հիբրիդային դիտացանցի միջոցով: Այն բաղկացած է 15 հիմնական անշարժ՝ ակտիվ նմուշառման դիտակայանից, որտեղ դիտարկումներն իրականացվում են ամենօրյա կտրվածքով և 214 շարժական՝ պասիվ նմուշառման դիտակետից, որտեղ իրականացվում են շաբաթական դիտարկումներ: ՀՀ և միջազգային պահանջների համաձայն անշարժ դիտակայաններում կատարվում է հիմնական

աղտոտող նյութերի՝ ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, փոշու, փոշու մեջ որոշվող մետաղների և գետնամերձ օզոնի (որպես երկրորդային աղտոտիչ) մոնիթորինգ, իսկ շարժական դիտակետերում՝ ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի մոնիթորինգ: Օդի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2006 թ. օգոստոսի 2-ի N160- Ն որոշման:


Գյումրի քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում է մեկ անշարժ դիտակայան և 24 շարժական դիտակետ: Գյումրի քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիան դեկտեմբեր ամսին գերազանցել է համապատասխան ՍԹԿ-ն 1.3 անգամ: Ազոտի երկօքսիդի և ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսներին չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:



Գծապատկեր 16. Գյումրի քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 17. Գյումրի քաղաքի մթնոլորտային օդում ծծմրի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 18. Գյումրի քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները

2.5 Ջրային ռեսուրսներ

2.5.1 Ջրային ավազան

Շիրակի մարզի հիմնական գետը Ախուրյանն է, որը սկիզբ է առնում Արփի լճից և հանդիսանում է Արաքս գետի առաջին վտակը: Այն սկսվում է 2017մ բարձրությունից և ունի 186 կմ երկարություն, որը միջին և ստորին հատվածներում ձևավորում է Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանը թափվելով Արաքս գետ իր գետաբերանից 708 կմ վրա: Ախուրյան գետի ջրբաժանը 9700ք կմ է, որից 2784քկմ գտնվում է Հայաստանում: Ախուրյան գետը միակ ջրային աղբյուրն է երկրի արևմտյան մասի համար, որի ջուրն օգտագործվում է և գյուղատնտեսական և արդյունաբերական նպատակներով: Ջուրը գետից վերցնում են ռոտզման համար մի շարք ջրանցքների միջոցով: Ախուրյան գետի ջուրը մեծամասամբ օգտագործվում է ռոտզման նպատակներով, քանի որ տարածքում գյուղացիները ակտիվորեն զբաղվում են գյուղատնտեսությամբ, մասնավորապես՝ այգեգործությամբ, հողագործությամբ և անասնապահությամբ: Ախուրյան գետի ջուրը օգտագործվում է Գյումրիի, Արթիկի և Ախուրյանի ձեռնարկատիրական, արդյունաբերական նպատակներով, որոնք հանդիսանում է գետի պոտենցիալ աղտոտող: Ախուրյանի հիմնական վտակներից են՝ Գյումրիգետը, Ջաջուռգետը և Կարկաչունը, որոնք չորանում են ամառային սեզոնի ընթացքում:

2.5.2 Լճեր, ջրամբարներ և ստորգետնյա ջրեր

Ուսումնասիրվող տարածքում և նրա մոտակայքում բացակայում են լճերը: Արփի լիճը, որը գտնվում է Շիրակի հյուսիս-արևմտյան անկյունում բնապահպանական տեսանկյունից առավել կարևոր լճերից մեկն է, որն աջակցում է վայրի բնության մի քանի յուրահատուկ և անհետացող տեսակների: Արփին, իր 20 կմ² մակերեսով և միայն 8մ առավելագույն խորությամբ սնվում է Եղնաջուր, Կարմրաջուր և Էլլալ գետերով: Արփի լիճը վերածվել է ջրամբարի, որը գտնվում է գետի վերին հոսանքում, իսկ նրա մեջտեղում հոսում է ամենամեծ ջրամբարը Հայաստանում՝ Ախուրյան ջրամբարը (525 մմ³), այն դեռ կառուցվում է: Մի շարք փոքր ջրամբարներ նույնպես սնվում են Ախուրյան գետից: Ստորերկրյա ջրային ռեսուրսները գտնվում են 5.4 – 6.2մ խորության վրա, սակայն ջրի տարեկան տատանման պատճառով ստորգետնյա ջրերի մակարդակը կարող է բարձրանալ մինչև 0.5 – 0.8մ. Ստորերկրյա ջրային ռեսուրսները պատկանում են ոչ ճնշումային ջրային հորիզոնին:

2.5.3 Ջրերի ֆոնային աղտոտվածությունը

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը նույնպես վերահսկվում է «Հիդրոոթերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ կողմից: Մակերևութային ջրերի քանակի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է 93 դիտակետ Հանրապետության 6 ջրավազանային կառավարման տարածքի (Հյուսիսային, Ախուրյան, Հրազդան, Սևան, Արարատյան, Հարավային) գետերի, ջրանցքների, ջրամբարների և Սևանա լճի վրա, որոնցում կատարվում են ամենօրյա դիտարկումներ ջրի և օդի ջերմաստիճանի, ջրի մակարդակի, սառցային երևույթների դիտարկումներ և ջրի ելքի չափումներ: ՀՀ կառավարության «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշմամբ (ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 27- ի N 75-Ն որոշում) ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով: Եթե ջրի որակի տարբեր ցուցանիշներ ընկնում են որակի տարբեր դասերի մեջ, ապա վերջնական դասակարգման մեջ հաշվի է առնվում վատագույնը:

Ուսումնասիրվող տարածքի տվյալները ներկայացվել են համաձայն Հայաստանի Հանրապետության Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոթերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի («ՀՄԿ» ՊՈԱԿ) կողմից պատրաստված շրջակա միջավայրի վիճակի մասին 2024 թվականի 1-ին եռամսյակի տեղեկագրի:

Ուսումնասիրվող հատվածները ընդգրկված են Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածքում:

Ախուրյանի ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 11 դիտակետում: Ախուրյան գետի ջրի որակը Ամասիա գյուղից ներքև մարտին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), Գյումրի քաղաքից վերև և Բագարան գյուղից ներքև հատվածներում մարտին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Գյումրի քաղաքից ներքև ջրի որակը մարտին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Կարկաչուն գետի ջրի որակը գետաբերանում

մարտին գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Մեծամոր գետի ջրի որակը Վաղարշապատ քաղաքից հարավ փետրվարին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մարտին՝ «վատ» (5-րդ դաս), Վաղարշապատ քաղաքից հարավ-արևելք փետրվարին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մարտին՝ «վատ» (5-րդ դաս), Ռանչպար գյուղից ներքև ջրի որակը փետրվարին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մարտին՝ «անբավարար» (4-րդ դաս):

Ախուրյանի ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակի մոնիթորինգն իրականացվել է 40 դիտակետում, որտեղ կատարվել են ջրի ջերմաստիճանի, ծախսի և մակարդակի չափումներ: Ախուրյանի ՋԿՏ-ի Արարատյան արտեզյան ավազանի հատվածում՝ Եղեգնուտի, Վարդանաշենի, Տարոնիկի, Ակնաշենի, Ապագայի չատրվանող հորատանցքերում նկատվել են ջրի մակարդակների բարձրացումներ 0.03-0.33մ-ի սահմաններում: Արագափի N1537 հորատանցքում հակառակ պատկերն է, ջրի մակարդակը իջել է 0.16մ-ով: Բարձրացումներ են նկատվել Ապագա N2020 գրունտային ջրհորում, որտեղ ջրի մակարդակը բարձրանալով 0.25մ կազմել է -1.31մ, իսկ Լուսազյուղի N2022 ջրհորում կայուն վիճակ է: Արմավիրի մարզի չատրվանող հորատանցքերից Ջրառատի N2021 և Ակնաշենի N2001 դիտակետերում ջրի ծախսի բարձրացումները՝ 0.26լ/վ և 0.09լ/վ-ով: Տարոնիկի N2002 և Գայի N1521 դիտակետերում նկատվել են ծախսերի, մակարդակների գրեթե կայուն վիճակներ: Բամբակաշատի և Հայկավանի (N2024, N2025) դիտակետերում նկատվել են ստորերկրյա ջրերի մակարդակի բարձրացումներ 0.05մ և 0.04մ-ով: Արարատյան դաշտի նախալեռնային գոտու Արագածավան N2080, Արտենի N2081, Արտամետ N2083, Մյասնիկյան N2082 համայնքների դիտակետերում դիտվել են ստորերկրյա ջրերի մակարդակների իջեցումներ 0.14-0.85մ-ով: Գյումրիի N2029, N2030, N2031 և Աշոցքի աղբյուրներում դիտարկվել են կայուն վիճակներ, նկատվում են ծախսի աննշան ավելացումներ կամ իջեցումներ: Գյումրի քաղաքի N2037 և Մարմաշենի N2032 բնաղբյուրներում ծախսի իջեցումները տատանվել են մինչև 0.14լվ: Հակառակ պատկերն է N2077, N2035, N2038, N2039, N2040 դիտակետերում, այստեղ ծախսի բարձրացումները կազմել են 0.05-0.2լ/վ: Ախուրյանի N2043 գրունտային ջրհորում ջրի մակարդակը իջել է 0.52մ-ով՝ հասնելով -9.65մ-ի, իսկ Առափի գյուղի N2042 գրունտային ջրհորում մակարդակը բարձրացել է 0.15մով:

2.5.4 Հողեր, էրոզիա և հողի աղտոտում

Շիրակի մարզը իր բերրի հողի և հողատեսակների առումով ներառված է Ախուրյան, Սպիտակ և Աշոցքի շրջանում: Այստեղ գերիշխում են բերրի, կրակավ, մարգագետնային հողերը որոնք խթանում են ցորենի, կարտոֆիլի, այգիների ու բանջարեղենի, ծխախոտի մշակմանը: Բերրի հողեր, մարգագետնային բարեբեր, գետահովտա-սարահարթային և վերգետնյա հողերը բնորոշ են տափաստանային հողերի գոտուն: Բերրի հողերը գտնվում են Շիրակի բարձրավանդակից և մի փոքր զառիվայր լեռներից 1300-2450մ բարձրության վրա: Տարբեր հումուսի տեսակներ (3.5 – 12 %), միջին տարատեսակներ (35 – 55 մգ/համ.), բարձր խառնուրդներ՝ մասամբ ալկալինի և աղակալված (pH 6.8 – 8.2) ինչպես նաև ջրի տարբեր ֆիզիկական հատկություններ առկա են այստեղ: Մարգագետնային բերրի հողերը գտնվում են բերրի հողերի տափաստանային մասերում շնորհիվ խոնավ ծածկի: Նրանք մեծամասամբ սփռված են Շիրակի բարձրավանդակում և ջրային երկրաբանական պայմանների շնորհիվ այստեղ նկատելի է հումուսի (10 – 13%), որը ցածրադիր գոտիներում դառնում է կավային: Աղակալման ռեակցիայի շնորհիվ նկատելի են կատիոններ 100 գր հողում մինչ 57 մգ/համ. Գետահովտա-սարահարթային հողերը ձևավորվել են գետերի մերձակա հովիտներում: Գյուղատնտեսական հողերը, որոնք երկար ժամանակ չեն մշակվել վերածվել են ավելի քարոտ, կարծր տարածքի, որտեղ հումուսի միջին շերտը (2 – 4 %), թույլ ալկալինի ազդեցությամբ (pH 6.9 – 8.1) և տարբեր խառնածիններ (14 – 35 մգ/համ) և որտեղ զգալի է մագնեզիումը: Տափաստանները, որոնք Շիրակի մարզի հիմնական պատկերն են տարածվում են Շիրակի դաշտավայրից մինչ Աշոցք: Հացահատիկի և խոտի հարթավայրերը գերիշխում են Շիրակի դաշտավայրում, իսկ Աշոցքում՝ մարգագետնային հարթավայրերը: Նույնիսկ լանդշաֆտի աննշան փոփոխությունը փոխում է նաև բերրի հողի հատկությունը: Նրանց հզորությունը թուլացնում է, հումուս կոնցենտրացիան նվազում է, մեխանիկա կազմը դառնում ավելի թեթև: Բերրի հողերում հումուսը 5% է: Տարածքի համեմատաբար հասարակ մասերը հիմնականում ծածկված են տարբեր տեսակի աղազերծված բերրի հողերով, մարգագետնային տափաստաններով: Բերրի հողերը, որոնք մեծ տարածում ունեն Շիրակի մարզում, հանրապետության ամենաբերրի հողերից են: Հասարակ մակերևույթը, թույլ արտահայտված էրոզիան և կլիմայական

առանձնահատկությունները բարենպաստ են հացահատիկների և մի շարք այլ մշակաբույսերի աճեցման համար:

Հողերի որակի գիտատույն իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանի համաձայն:

2022 թվականի հողային ծածկույթի ծանր մետաղներով աղտոտվածության ուսումնասիրման համար դիտարկումներն իրականացվել են Լոռի, Վայոց ձոր, Գեղարքունիկ, Տավուշ, Կոտայք, Արարատ, Սյունիք, Շիրակ և Արմավիրի մարզերում:

Մարզերի և քաղաքների հողերում մետաղների կոնցենտրացիաների համապատասխան ՍԹԿ-ներից գերազանցման վերաբերյալ տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում:

Մարզ/Քաղաք	Վանադիում	Պղինձ	Ցինկ	Քրոմ	Նիկել	Արսեն	Կապար
	<i>Գերազանցումը համապատասխան ՍԹԿ-ից, անգամ</i>						
Տավուշ	1.3	14.7-35.0	5.9-8.4	7.3-16.2	8.0-10.3	4.0-19.5	-
Կոտայք	1.5-2.0	17.0-46.3	5.1-12.7	4.3-26.7	9.3-28	2.5-10	1.3-2.1
Արարատ	1.2	11.0-14.7	2.9-4.3	8.0-11.3	13.8-17.5	3.5-6.5	-
Վայոց ձոր	1.5-2.9	25.0-74.7	3.5-6.7	1.7-15.3	4.8-13.8	3.5-6.5	1.1-1.4
Լոռի	1.3-7.1	16.4-1760.3	2.6-55.9	1.7-16.2	2.9-19.3	2.5-37.9	1.1-27.6
Գյումրի	1.4-2.4	15.6-24.3	5.4-23.0	1.7-14.3	8.5-18.3	2.5-5	1.2-1.6
Վարդենիս	1.1-2.0	18.0-24.7	5.3-8.9	19.0-42.0	24.3-42	5.5-8.0	1.2-1.3
Մեծամոր	1.5	16.7	6.1	21.8	24.3	7.0	-
Արմավիր	1.1-2.5	20.7-28.7	6.8-9.7	14.2-65.2	32.5-41	4.0-6.5	1.4-2.4
Կապան	1.1-2.2	107.7-213.3	7.7-23.7	1.7-15.7	9.3-17	6.5-12	1.5-10.7
Քաջարան	1.5-1.6	230.3-966.0	6.3-18.5	1.7-7.0	7.0-7.3	10.0-11.5	1.6
Մեղրի	3.2	70.7	5.9	1.7	7.8	7.0	-
Ագարակ	1.8-2.7	140.3-220.3	5.1-11.0	1.7-8.8	4.8-10.5	3.0-5.0	1.3-1.4

2.5.5 Կենսաբազմազանություն

Բուսական աշխարհ

Շիրակի մարզը երկրի մնացած հատվածից տարբերվում է իր հակադրությամբ հարավում՝ կիսաանապատից անապատային, լեռնային տափաստաններով մինչդեռ հյուսիսային տարածքը՝ ալպյան մարգագետիններով, որը հայտնի է որպես հայկական ալպեր: Շիրակի բուսականությունը միատար չէ և այս շրջանում չկան անտառներ: Հյուսիսային Շիրակի ֆլորայում հանդիպելի են Iris lineolata, I. Caucasica, Merenderamirzoeval, Colchicum Szoritsii, Gagea ssp., Puschkiniascilloides, Draba ssp., Lallemautiacaneseus, Ranunculus ssp., Myosotalpestris, Pedicularis ssp., Trifolium ssp. բույսերը: Ցածրադիր գոտում՝ Gladiolus atroviolaceus, Nigella oxypetala, Actynolemamacrolema, Gundeliatournefort, Verbascumsaccatum, Lallemanitaiberica,

Roemeria retracta, Scabiosa argentea, Scorrone aposa, Muscaribeglecta, Stchysinflata, Astragalus distyophysus, A. kochianus, Achillea tenuifolia, Helichrysum rubicundum, Silenaspergulifolia. Գետի կիրճի բուսական աշխարհը ներառում է՝ *Alkanna orientalis*, *Cerasus incana*, *Prus salicifolia*, *Cerasus mahaleb*, *Amygdalus ferzlinia*, *Spirala crenata*, *Saxifraga cymbalaria*: Անապատային և կիսաանապատային ֆլորան ներառում է՝ վայրի եղեսպակ, տափաստանային խոտ, ծղոտածաղիկ, կակաչ և մարգարիտկա: Ծրագրի իրականացման տարածքը հիմնականում ծածկված է հացահատիկի բույսերով և *Festuca* Gaudin, *F. ovina* L., *Koeleria albobovii* Domin, *K. cristata* (L.) Pers., *Bothriochloa schaeumum* (L.) Keng, *Stipacapillata* L., *S. Lessingiana* Trin. et Rupr., *S. tirsae* Stev., *Elytrigiatrichophora* (Link) Nevski, *Galium verum* L., *Agropyron*, *Andropogon*, *Scabiosa*, *Veronica*, *Artemisia*, *Achillea*, *Astragalus*, and *Datura stramonium*. Ծրագրի իրականացման տարածքում ՀՀ բույսերի Կարմիր Գրքում գրանցված բուսատեսակներ չկան: Գյումրի քաղաքի զբոսաշրջության ենթակառուցվածքների և ճանապարհների վերակառուցում (ՏՏԵԶ) 25 Քանի որ ծրագրի տարածքը գտնվում է Գյումրի քաղաքի խառը կառուցապատման գոտում, ուստի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման շրջանակներում չի դիտարկվում նշված տարածքի բուսական աշխարհի վրա ազդեցություններ:

Կենդանական աշխարհը

Ի տարբերություն բույսերի, կենդանիները շարժուն են և կարող են հարմարվել տարբեր լանդշաֆտային պայմաններին: ՀՀ Շիրակի մարզի գերիշխող ժայռային կառուցվածքը և բուսականությունը եզակի էկոհամակարգ է լի անապատային վայրի աշխարհով և զարնանն ու աշնանը միգրանտ թռչուններով: Գյումրիից Վրաստանի սահման՝ հողը դանդաղորեն բարձրանում է մինչ Ջավախք լեռնաշղթա: Չնայած որ, այս տարածքը տարվա ընթացքում Հայաստանի ամենացուրտ մասն է, այն լի է ցանցաղ ճահիճներով, որը հարմար է ջրլող թռչունների և արագիլների համար: Լեռնատափաստանային և ենթաալպյան գոտիներում առկա են հետևյալ տեսակները՝ *Vertigo substrata*, *Euxinasomchctica*, *Caucasian olophrum*, *Pterostrichus*, saddle and steppe sagas are spread. Among mammals the following species occur here: *Lepuseuropaeus*, *Vulpes vulpes*, *Canis lupus*, *Muridae*, *Microtinae*. Herpenthofauna here is poor, mainly being represented by *Lacertavalentini*, *Viperadarevskii*, *Viperaerivanensis* species: Իսկ թռչուններից տարածված են՝ *Passeriformes* և *Falconiformes* տեսակները: Քանի որ ծրագրի

տարածքը գտնվում է Գյումրու քաղաքային միջավայրում, որտեղ առկա է տրանսպորտային երթևեկություն, աղմուկ և այլն ուստի կենդանատեսակների առկայություն կամ տվյալ տարածքում հանդիպելու հնարավորություն չի դիտարկվում:

2.5.6 Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Ծրագրի իրականացման և հարակից տարածքներում չկան ԲՀՊՏ-ներ՝ արգելոցներ, ազգային պարկեր, պետական արգելավայրեր կամ բնության գրանցված հուշարձաններ:

2.5.7 Հնագիտական, պատմական, բնական և մշակութային հուշարձաններ

